



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՎԵԼ ՃԶՄԱՉՅԱՆԻ  
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐԿԱ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

20.11.2015



Նոյեմբերի 22-ին, 1993թ-ից սկսած, Հայաստանի Հանրապետության հազարավոր բանկային աշխատողներ նշում են իրենց մասնագիտական տոնը:

Այս տարին դյուրին չէր ՀՀ բանկային համակարգի համար և լի էր նոր և բարդ մարտահրավերներով: Առավել ևս գոհացուցիչ կարելի է համարել այն փաստը, որ մեր բանկային համակարգը դժվարին պայմաններում շարունակում է պատվաբեր կատարել իր գործառույթները, զերծ պահելով մեր բնակչությանը և տնտեսությունը ցնցումներից և այլ վտանգներից:

Կցանկանամ մեզ բոլորիս ուրախ տոն, բարեկեցիկ ապագա և ինքնադրսևորման վառ օրինակներ, ինչը գրեթե անհրականանալի է առանց ամուր թիկունքի՝ ընտանեկան երջանկության: Մաղթում եմ նաև բոլոր բանկային աշխատողներին, որ մի օր նրանք դառնան բանկիր: Քաջ առողջություն և բազմապիսի հաջողություններ պրոֆեսիոնալ գործունեության ասպարեզում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՎԵԼ ՃԶՄԱՉՅԱՆԻ  
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՊՐՈՄԵԹԵՑ ԲԱՆԿԻ 25-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՑԹԻՆ

17.10.2015



«Պրոմեթեյ Բանկը հանդիսանում է առաջին գրանցված առևտրային Բանկը ՀՀ-ում և իր գործունեության առաջին լիցենզիան ստացել է դեռևս 1990թ-ին: Բանկն ի սկզբանե որդեգրել է Հայաստանի Հանրապետության զարգացմանը նպաստելու առաքելություն, որին հավատարիմ է մնում արդեն քառորդ դար:

Բանկի անվանումն ինքնին խոսում է. ինչպես բոլորին հայտնի է, Պրոմեթևսը գողացավ իրախճանքների մեջ օրերն անցկացնող և մարդկանց մասին մոռացած աստվածներից կրակը և փոխանցեց այն մարդկությանը, դրանով իսկ սկիզբ դնելով տեխնիկական առաջընթացին: Այդ կրակը խորհրդանշում է մարդկության գիտելիքները և կարողությունները, բարին և չարն առանձնացնելու հատկությունը: Կես-կատակ, կես-լուրջ ասեմ, որ մեր բավականին «չորոտ» բնագավառում բանկին այսպիսի գեղարվեստական և զգացմունքային անվանում շնորհելը (իսկ այդ առումով մեր բանկային համակարգում Պրոմեթեյի հետ կարող են մրցել թերևս Բիրլոսը և, իհարկե, Անելիքը), համաձայնեք, ինքնին որոշակի խիզախություն և ոչ տրիվիալ աշխարհայացք էր պահանջում: Դե մենք էլ երբեք չենք կասկածել մեր հարգելի Սենիկ և Վազգեն Գևորգյանների և սիրելի Էմիլ Սողոմոնյանի խիզախությանը և վառ անհատականությանը:

Այսօր էլ Պրոմեթեյ Բանկն աչքի է ընկնում իր անձնակազմի տարիների փորձառության և հմտության, լավ իմաստով պահպանողականության և միաժամանակ նորարարական մտածելակերպի ներդաշնակեցմամբ: Բոլորս հիշում ենք Հայաստանում էլեկտրոնային փող թողարկելու առաջին թույլտվությունը ստացած «Բդրամ» ընկերության և «Master Card» հեղինակավոր միջազգային վճարային համակարգի հետ բանկի համատեղ և նախադեպը չունեցող քո-բրենդային քարտային ծրագիրը կամ Բնության

համաշխարհային հիմնադրամի, ՀՀ բնապահպանության նախարարության և Օրանժ Արմենիայի հետ համատեղ ծրագիրը՝ Հայաստանում Կովկասյան ազնվացեղ եղջերուների վերաբնակեցման նպատակով:

Էմիլ Սողոմոնյանը, լինելով Հայաստանի հնագույն և փորձառու բանկիրներից մեկը, ջանք ու եռանդ չի խնայել Պրոմեթեյ բանկը կայացնելու և բազմակողմանի զարգացնելու գործում, և այսօր այդ բազմաչարչար աշխատանքի պտուղները տեսանելի են բոլորին: Լինելով Էմիլի հետ ոչ միայն հին ընկերներ, այլև կապված լինելով բազմաթիվ քավոր-սանիկային հարաբերություններով, այդ ամբողջն անցել է իմ աչքի առջև: Իսկ այսօր, 25 տարի անց, մեր բոլորիս աչքերի առջև ունենք Պրոմեթեյ բանկ՝ Հայաստանի ամենակայուն բանկերից մեկը – բանկ իր ակնհայտ նվաճումներով և էլ ավելի հավակնոտ ծրագրերով և հեռանկարներով:

Բանկն ունի զարգացման մեծ ներուժ, և ես համոզված եմ, որ համադրելով իր ուժեղ կողմերը, մրցակցային առավելություններն ու տարիների փորձառությունը, այն կկարողանա իրագործել բոլոր ռազմավարական նպատակները և մեկ անգամ չէ, որ հաճելիորեն կզարմացնի բոլորիս:

Հայաստանի բանկերի միության և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Պրոմեթեյ բանկի 25-ամյա հոբելյանը և ցանկանում եմ այն ամենը, ինչը բանկի ղեկավարությունը կցանկանար ինքն իրեն:»

*Հայաստանի բանկերի միությունը բանկային համակարգում երկարամյա և բեղմնավոր աշխատանքի համար և Պրոմեթեյ բանկի հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ Էմիլ Սողոմոնյանին պարգևատրեց «Տիգրան Մեծ» հուշամեդալով:*



**ՀԲՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄՎԵԼ ՃԶՄԱԶՅԱՆԻ ՈՂԶՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ, ՈՒՂՂՎԱԾ  
IX ԲԱՆԿԱՅԻՆ ՖՈՐՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԵՑՆԵՐԻՆ, ՈՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԷՐ  
ՄԻՆՍԿՈՒՄ (ԲԵԼԱՌՈՒՍ) ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ**  
24.09.2015

Уважаемые организаторы 9-го Национального Банковского Форума, коллеги!

Прежде всего, хотелось бы поприветствовать своевременное решение Ассоциации российских банков о переносе традиционного форума на пространство Евразийского экономического союза (ЕАЭС), в данном случае – в столицу Беларуси. Как говорится, «дома и стены помогают», а Минск как центр Европы, как мы сегодня убедились при знакомстве с ним, ничуть не хуже иных европейских столиц.

А обсудить нам предстоит немало волнующих вопросов, о чем свидетельствует напряженная повестка форума, ведь хотя нашему интеграционному объединению нет еще и года, однако по старой привычке «считать цыплят по осени» нам уже есть что обобщить и откорректировать. В любом случае наши банковские системы в частности, как и страны в целом, пустились в долгий путь, который, безусловно, в конечном итоге приведет нас к благополучию, однако, что также очевидно, дорога эта не будет устлана сплошными розами – время от времени придется наткнуться и на ухабы. Так вот: чтобы цветов было побольше, а ухабов поменьше, нам не помешает почаще встречаться друг с другом, используя любую возможность, любые площадки, так сказать, для сверки часов. И этот форум и есть одна из таких хороших возможностей.

Уважаемые участники форума! Завтра нам предстоит выслушать и обсудить множество злободневных вопросов, так или иначе связанных с формированием крупнейшего на евразийском пространстве интеграционного объединения и, в частности, с настоятельной необходимостью постепенного сближения параметров денежно-кредитной политики и банковского регулирования в странах-участницах ЕАЭС.

Хотелось бы обратить Ваше внимание на один вопрос, который сегодня активно обсуждается в Армении. Недавно премьер-министр нашей страны Овик Абрамян на полях межправительственного Совета ЕАЭС, проходившего в белорусском Гродно, предложил перейти во взаимной торговле стратегическими товарами между странами ЕАЭС к рублевым расчетам, отказавшись от привязки к доллару США. По сути, это предложение созвучно с идеей российского президента Владимира Путина об уменьшении уровня долларизации не только в ЕАЭС, но и в СНГ. Предложение главы правительства Армении будет обсуждено регулирующими органами ЕАЭС еще до конца года, и в случае его принятия, от национальных банков и банковских систем стран-участниц союза потребуются кропотливая работа в указанном направлении. Тем более, что высокий уровень долларизации – это проблема, которая присуща едва ли не всем нашим странам,

так что уменьшение влияния американской валюты на наши экономики и определенная в этом плане диверсификация, полагаю, в общих наших интересах.

Словом, об этом подробнее поговорим завтра: в повестке имеется доклад на тему расширения использования национальных валют стран СНГ в двусторонних расчетах. А сегодня хотелось бы пожелать участникам форума хорошенько отдохнуть в гостеприимных стенах Посольства Российской Федерации в Беларуси, чтобы завтра с удвоенной энергией приняться за работу. Желаю всем нам ярких идей, нетривиальных подходов и взвешенных решений.

Спасибо за внимание!



## ԵԱՏՍ-Ի ԿԲ-ՆԵՐԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

25.09.2015



ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջանի Ուսումնահետազոտական կենտրոնում գումարվել է ԵԱՏՍ անդամ-պետությունների կենտրոնական/ազգային բանկերի արժույթային քաղաքականության գծով խորհրդատվական մարմնի 11-րդ նիստը:

Նիստում քննարկվել են անդամ-պետություններում ընթացիկ տնտեսական իրավիճակին և դրամավարկային քաղաքականության իրականացմանը, մակրոտնտեսական և ֆինանսական կայունության ռիսկերի կանխարգելման միջոցներին, ֆինանսական ոլորտի օրենսդրության ներդաշնակության ուղղությամբ տարվող աշխատանքների և վճարային համակարգերի ոլորտում գործակցությանը վերաբերող հարցեր:

Նիստին մասնակցել են ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանը, ՌԴ Կենտրոնական բանկի նախագահ Էլվիրա Նաբիուլինան, Ղրղզստանի ազգային բանկի նախագահ Տոկունբեկ Աբդիգուլովը, Բելառուսի ազգային բանկի նախագահի տեղակալ Սերգեյ Կալեչիցը, Ղազախստանի ազգային բանկի նախագահի տեղակալ Օլեգ Սմոլյակովը:

Նախօրեին ԵԱՏՄ անդամ պետությունների կենտրոնական/ազգային բանկերի ղեկավարներին ընդունել էր ՀՀ նախագահ Մերժ Սարգսյանը:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎԱՆՂՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ  
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱՏԵՂ ՄԻՋՈՑԱԹՈՒՄԸ, ՆՎԻՐՎԱԾ  
ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՕՐՎԱՆ**

30.10.2015



Խնայողությունների համաշխարհային օրվա կապակցությամբ ս.թ. հոկտեմբերի 30-ին ՀԲՄ-ի գրասենյակում կազմակերպվել էր մամուլի ասուլիս՝ Հայաստանի բանկերի միության և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի ղեկավարության մասնակցությամբ, որտեղ խոսվել է բանկում խնայողական/ավանդային հաշիվ ունենալու առավելությունների

մասին՝ շեշտադրելով ներդրված գումարների ապահովությունը բանկում, ցածր ռիսկայնության, ինչպես նաև այլ ծառայություններից օգտվելիս առավելություն ունենալու մասին: Ասվածի լավագույն ապացույցը ՀԲՄ-ի նախագահի տեղակալ Սեյրան Սարգսյանի և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի տնօրեն Հերմինե Հարությունյանի կողմից ներկայացված տվյալներն էին՝ բանկերի կողմից սպասարկվող ավանդատուների քանակի, ներգրավված ավանդների ծավալի վերաբերյալ: Շեշտադրվեց նաև, որ բանկային համակարգում նկատվում է բանկերի կողմից սպասարկվող ավանդատուների քանակի, ինչպես նաև ներգրավված ավանդների ծավալի կայուն աճ: Սա վկայում է բանկերի հանդեպ հանրության վստահության ամրապնդման և մեծացման մասին: Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից ներկայացվել է նաև ՀՀ բանկերում ավանդ ներդնելիս ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի առավելությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Անդրադառնալով խնայողությունների համաշխարհային օրվա կարևորագույն ուղերձին՝ յուրաքանչյուր մարդ որքան լավ է տիրապետում խնայելու և սեփական ֆինանսները կառավարելու <<արվեստին>>, այնքան ավելի

խելամիտ որոշումներ է կայացնում իր ֆինանսներին և ապագային առնչվող հարցերում: Խնայած գումարն անվտանգության և ապահովության զգացում է առաջացնում և քանի որ ոչ ոք չգիտի, թե կյանքի հանգամանքներն ինչպես կարող են փոփոխվել, ապա անհրաժեշտ է միշտ պատրաստ լինել այդ փոփոխություններին:

**ԱՐԴՇԻՆԲԱՆԿԸ \$100 ՄԼՆ-Ի ՊԱՐՏԱՏՈՄՍ Է ԹՈՂԱՐԿԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ**

24.07.2015



**Ardshinbank**

Արդշինբանկն \$100 մլն-ի պարտատոմս է տեղաբաշխել միջազգային շուկայում:

Ինչպես հաղորդում է Reuters-ը, արժեկտրոնի եկամտաբերությունը կազմում է 12%, որի վճարումը կատարվելու է կես տարին մեկ: Պարտատոմսերի անվանական արժեքը \$100 հազար է:

Արդշինբանկն իր 5 տարի ժամկետայնությամբ (մարումը՝ մինչև 2020թ. հուլիսի 29-ը) պարտատոմսերը տեղաբաշխել է J.P.Morgan ներդրումային բանկի օժանդակությամբ, որը եղել է թողարկման գլխավոր տեղաբաշխողը:

Պարտատոմսերը ցուցակված են Իռլանդիայի բորսայում:

Սա Արդշինբանկի կողմից պարտատոմսերի երկրորդ թողարկումն է: Առաջին թողարկումը տեղի էր ունեցել 2014թ. դեկտեմբերի 9-ին: Բանկն այդ ժամանակ ներգրավել էր \$75 մլն-ի ֆինանսական միջոցներ:

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԿ՝ ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԻՑ

24.07.2015



ՎՏԲ-Հայաստան Բանկը ուսումնական հաստատություններ վճարովի հիմքերով ընդունված ուսանողների համար գործարկել է ուսանողական վարկ՝ ՀՀ պետական ծրագրի շրջանակում:

Բանկում նշել են, որ վարկ կարող են ստանալ Հայաստանի պետական կամ պետական հավատարմագրություն ունեցող ուսումնական հաստատությունների բակալավրիատի կամ մագիստրատուրայի ուսանողները՝ ուսման վարձը վճարելու նպատակով:

Վարկի գումարը կարող է կազմել յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ոչ ավելի, քան 450 000 դրամ, բայց ոչ ավել քան 1 800 000 դրամ ուսման ամբողջ ժամանակահատվածի համար:

Տոկոսադրույքը 12% է, որից 2%-ը սուբսիդավորվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, իսկ ուսանողի գերազանց առաջադիմության դեպքում սուբսիդավորվում է 3%:

Վարկը տրվում է 10 տարի ժամկետով: Անհրաժեշտ է ծնողների կամ ինսամակալների երաշխավորություն:



## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԱՏՄ-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

18.08.2015

ՀՀ կառավարությունը իր նիստում որոշում ընդունեց միանալ ԵԱՏՄ «Կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար ֆինանսական շուկաներում պայմանների ստեղծման նպատակով ֆինանսական ոլորտում տեղեկությունների, այդ թվում՝ կոնֆիդենցիալ, փոխանակման մասին» համաձայնագրին:



Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի կառավարությունների ու Կենտրոնական բանկերի միջև այս համաձայնագիրը կնքվել էր 2014 թվականի դեկտեմբերի 23-ին:



Փոխանակման ենթակա են միմյանց ֆինանսական համակարգերի մասին տվյալները, մասնավորապես՝ բանկերի ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի, ապահովագրական ընկերությունների ակտիվների, սեփական կապիտալի, ապահովագրական պահուստների և վճարումների մասին:

Փոխանակման ենթակա են նաև այնպիսի գործարքների մասին տվյալները, որոնց շրջանառությունը թույլատրված է այլ պետությունների արժեթղթերի շուկայում:

Կարող են փոխանակվել նաև այլ տվյալներ, որոնց մասին կարգավորող մարմինները (կենտրոնական կամ ազգային բանկերը) կարող են առանձին պայմանավորվել: Այս տվյալների փոխանակումը չի կարող խախտել անդամ երկրների օրենսդրությունը:

**ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ՝ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ  
ԱԳՐԻԿՈՂ ԲԱՆԿՈՒՄ**

25.08.2015



Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը և Գերմանիայի բնության պահպանության միությունը (NABU) ս.թ. մայիսի 22-ին հայտարարել էին «Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի հավաստագրման» անվճար ծրագրի մեկնարկի մասին:

Ծրագիրն ուղղված է օրգանական արտադրանքի շուկայի ներկա իրավիճակի վերլուծությանը և բոլոր այն կազմակերպությունների և այն անհատների համար է, ովքեր հետաքրքրված են օրգանական հավաստագրում ստանալու մեջ:

Ծրագրով հետաքրքրված գյուղատնտեսական օրգանական արտադրանք թողարկող տնտեսվարողները և անձինք այսուհետ կարող են «Օրգանական գյուղատնտեսական արտադրանքի հավաստագրման» ծրագրի մրցութային փուլին մասնակցելու համար բանկի պաշտոնական կայքից ներբեռնել դիմում հայտերը և լրացնելով դրանք՝ մասնակցել մրցութին:

Հավաստագրման դիմած մասնակիցների սերտիֆիկացման համար ներկայացրած արտադրանքը մրցութի շրջանակում կանցնի փորձագիտական գնահատում և արդյունքների ամփոփումից հետո մրցութում հաղթող ճանաչված տնտեսվարողները Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի և NABU-ի ֆինանսական աջակցությամբ կանցնեն օրգանական սննդի սերտիֆիկացում:



**«ՅՈՒՆԻԲԱՆԿԻՆ» ՀԱՆՁՆՎԵՑ ISO 27001:2013 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ**

31.08.2015



«Յունիբանկը» հաջողությամբ ավարտեց ISO 27001:2013 միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի ներդրման աշխատանքները:

Գործընթացն իրականացվել է «Բյուրո Վերիտաս» ֆրանսիական ընկերության աջակցությամբ, որը հանդիսանում է սերտիֆիկացման ծառայությունների ոլորտի համաշխարհային առաջատարներից մեկը: Ընկերության ներկայացուցիչները «Յունիբանկին» հանձնեցին ISO 27001:2013 ստանդարտին համապատասխանության հավաստագիր: Այդ ստանդարտը ևս մեկ քայլ է կառավարման գործընթացների արդյունավետության և տեղեկատվական համակարգերի անվտանգության բարձրացման ուղղությամբ:



ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿԸ ԳՈՐԾԱՐԿԵԼ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ  
ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐԻ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐ

04.09.2015



ՎՏԲ-Հայաստան Բանկում այսուհետ հասանելի են ապահովագրական պրոդուկտների նոր տեսակներ, որոնցից մի քանիսը բացառիկ են շուկայում:

«Ապահովագրական պրոդուկտների նոր տեսակներն իրենցից ներկայացնում են ապահովագրական պոլիսներ՝ հարմար և պահանջված պայմանների, ռիսկերի և ապահովագրավճարի ընտրությամբ, որը թույլ է տալիս հաճախորդին ընտրություն կատարել իրեն հարմար և հասկանալի միջոցով: Հաճախորդի հարմարավետությունը կայանում է նրանում, որ ձևակերպելու համար պետք չէ գնալ ապահովագրական ընկերություն, բավական է ծառայության դիմաց վճարել բանկում և ձեռք բերել ապահովագրական պրոդուկտը»,- ասված է հաղորդագրությունում:



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Է ԿՆՔԵԼ ԱՇԽԱՐՀԱՀՈՉՍԿ CR2  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

05.10.2015



Ամերիաբանկը հեռահար բազմաֆունկցիոնալ ծառայությունների նոր համակարգի ներդրման պայմանագիր կնքեց CR2 իռլանդական ընկերության հետ:

Ամերիաբանկի տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանի խոսքով՝ CR2 կազմակերպությունը լավագույններից է

համաշխարհային շուկայում, որն առաջարկում է հեռահար բանկային ծառայությունների համակարգեր. «Այն լավագույնն է իր առանձնահատուկ

լուծումներով՝ բանկոմատների և այլ ինքնասպասարկման կետերի համակարգի միացման և հաճախորդների համար անհատական ծառայությունների մատուցման ոլորտում: Bank World համակարգի միջոցով հաճախորդն առանց քարտի կարողանալու է բանկոմատից գումար ստանալ իր հաշվից, քաղվածքներ տպել, փոխանցումներ անել, հատուկ իր համար ստեղծված առաջարկություններ ստանալ: Ծրագիրը, հաճախորդին իդենտիֆիկացնելուց հետո, նրա պահանջներից ելնելով՝ հատուկ առաջարկներ է անելու: Այն հաճախորդները, որոնք արդեն օգտագործում են մեր բանկի Ինտերնետ բանկ և Մոբայլ բանկ համակարգերը, շատ հեշտությամբ կանցնեն այս նոր միջավայր»:



## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է ISO/IEC 27001:2013 ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

09.10.2015



Զարգացման Հայկական Բանկին «Բյուրո Վերիտաս» միջազգային հոլդինգի կողմից շնորհվել է Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի ISO/IEC 27001:2013 միջազգային ստանդարտին

համապատասխանության հավաստագիր:

Բանկի տարածած հաղորդագրության համաձայն, այս հավաստագիրը փաստում է, որ բանկում ապահովված է շրջանառվող ամբողջ տեղեկատվության գաղտնիությունը, հասանելիությունը և ամբողջականությունը՝ միջազգային պահանջներին համապատասխան և ապացույցն է այն բանի, որ Զարգացման Բանկը հետամուտ է իր և իր հաճախորդներին վերաբերող տեղեկատվության անվտանգության, ինչպես նաև բանկի գործունեության անընդհատության ապահովման գործընթացում:



**ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿՆ ԱՎԵԼԱՅԻՆ Է ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ**  
26.10.2015



ՎՏԲ Բանկն ամբողջ ծավալով գնել է ՎՏԲ-Հայաստան Բանկի բաժնետոմսերի հավելյալ թողարկումը՝ 17 մլրդ դրամ արժողությամբ:

Բանկում նշել են, որ արդյունքում ՎՏԲ-Հայաստան Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 37.8 մլրդ դրամ: ՎՏԲ Բանկի մասնաբաժինը ՎՏԲ-Հայաստան Բանկի կապիտալում մնացել է անփոփոխ՝ 100%:

«Լրացուցիչ կապիտալիզացիան կատարվել է համաձայն այս տարվա հուլիսին կայացված որոշման: Կապիտալիզացիայի մակարդակի բարձրացումը կնպաստի բանկային համակարգում բանկի դիրքերի ամրապնդմանը», - ասված է ՎՏԲ-Հայաստան Բանկի տարածած հաղորդագրությունում:



**ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ \$3 ՄԼՆ ՎԱՐԿ ԿՍՏԱՆԱ BLUEORCHARD-ԻՑ**  
11.11.2015



Հայէկոնոմբանկը և Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում տեղակայված BlueOrchard Microfinance Fund LLC ներդրումային ընկերությունը կնքել են \$3 մլն արժողությամբ վարկային պայմանագիր: Վարկի միջոցներն ուղղվելու են Հայաստանի փոքր և միկրո բիզնեսի ֆինանսավորմանն ու զարգացմանը:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):